№ 89 ՅՈՒՆԻՍԻ 2 (14) 1878 ՅՈՒՆԻՍԻ 2 (14) № 89

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կնոջ կոչումը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Սանահնից։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ներսէս Կ. Պօլսի պատրիարք։ Աւստրիա։ Յունաստան։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ

Լուսաւորված երկիրներում շատ ժամանակ է արդէն որ թէ ուսումնականները և թէ պետական մարդիկ վիճաբանում են այն բանի վրա, թէ ինչ դեր պէտք է խաղայ կինը հասարակութեան մէջ, — և չեն հասնում ոչինչ որոշ հետևանքի իրանց վիճաբանութիւնների մէջ, որովհետև վիճողների միմեանց հակառակ կողմերը ծայրայեղութիւնների են հասնում կանանց խնդրի լուծման վերաբերութեամբ։

Վիճողների մի մասը հաստատում է որ կինը բնութենից արդէն ստեղծված է միմիայն ընտանեկան շրջանի համար։ Հակառակ կողմը, հանելով միւս ծայրայեղութեանը, հաստատում է որ կինը նոյնքան իրաւունք ունի հասարակական բոլոր պաշտօնները վարելու, որքան և տղամարդը։

Այնպիսի հասարակութեան համար ինչպէս հայոց հասարակութիւնն է, մեր կարծիքով, երկու հակառակ տեսութիւններն էլ վնասակար են։

Առաջին տեսութեան գործադրութեան մէջ մենք չափ ու սահման ենք անցնում։ Բացի նեղ ընտանեկան շրջանից կինը մեզանում ուրիշ ոչինչ հնարաւոր շրջան չունի, բացի ընտանիքից ուրիշ ոչ մի դրութիւն չունի որտեղ կարողանայ գործ դնել իր մտաւոր և բարոյական ոյժերը։

Իսկ մի անզարգացած հասարակութեան մէջ տալ կանանց տղամարդիկների հետ կատարելապէս հաւասար իրաւունք ամեն հասարակական պաշտօններ և գործեր վարելու, — մեր կարծիքով տարաժամ և վնասակար կը լինէր։

Եթէ ուշադրութեամբ քննենք մարդկային ամբողջ պատմութիւնը, կը համոզվենք, որ կինը, հին դարերից սկսած մինչև այժմ ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն ազգութիւնների մէջ տղամարդու և ընտանիքի մէջ միջնորդի դեր էր խաղում։ Հատ քիչ բացառութիւններ կային, երբ կինը անմիջապէս ազդում էր հասարակութեան վրա, բայց մեծ մասամբ կինը ընտանեկան շրջանից, իր տան պատերից բարոյական ներգործութիւն ունէր մարդու վրա, որ նրա մէջ գտնում էր իր ոյժը, իր զօրութիւնը գործելու և արդիւնաբերելու։

Կինը ներգործում էր մարդու վրա ընտանիքում, կինը ներգործում էր մարդու վրա սալոններում, կինը ոգևորում էր, ոյժ էր տալիս տղամարդու մտաւոր, գրական և գեղարուեստական արդիւնաբերութեանը, կինը տղամարդու վրա ներգործելով, ոգևորում էր նրան դէպի հասարակական գործունէութիւնը, դէպի քաղաքական, ազգային, յեղափոխական շարժումները....

Ահա, մեր կարծիքով, կնոջ ամենաբնական, ամենաարժէր, ամենասուրբ կոչումը՝ լինել ոգևորող, ոյժ տուող, լինել մարդու համար բարոյական անապատելի աղբիւր, նորա բոլոր մարդասէր, հասարակաշէն, օգտաւէտ, արդիւնաբերող, առաջ մղող գործերի և արդիւնաբերութեան մէջ....

Մենք հայերս բաղդաւոր կը լինէինք, եթէ հայ կինը ըմբռնէր իր այդ կոչումը և այդպէս գործէր։

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍԱՆԱՀՆԻՑ

25 մայիսի

«Մշակի» վերջին համարների մէկի մէջ, կարճ կերպով հասկացնում է Սանահնի նամակագիրը, թէ այնտեղի վանքի միաբան վարդապետներից մէկը հալածում է աշխատասէր Մժեժեանցին. բայց պարզ չէ ասում թէ ո՞ր վարդապետը, որը մնում է «Մշակի» ընթերցողների համար անորոշ։

Դրա մասին ես պէտք է բացատրեմ։ Հ. Մժեժեանցը ինը տարվայ ընթացքում չը նայելով իր ծերութեանը և անձնական տկարութեանը՝ չարունակ գործեց մանկավարժական ասպարիզում, և դեռ գործում է։ Նա այս երկար միջոցում բացի արգելութիւններից նախկին վանահոր կողմից, չունեցաւ ոչ մի խրախուսանք, ոչ ոք չը գնահատեց մինչև այժմ նրա աշխատանքը։ Սակայն նա չը յուսահատվեցաւ երբէք նախկին վանահոր անմարդավայել արարմունքներից. դարձեալ գործում էր անդադար։

Իսկ ահա մի ամբողջ տարի է որ ինչպէս վանքը, նոյնպէս և ուսումնարանը կերպարանափոխվեցան. գործողութեան մեծ արգելքը հեռացաւ, ատելութիւնը անհետացաւ։ Մի փոքր ժամանակ չնորհիւ նոր վանահոր վանքի մէջ թագաւորեց խաղաղութիւն, կատարեալ միաբանութիւն։ Ասացի մեծ արգելքը հեռացաւ, բայց չը յիշեցի թէ նրա պոչը մնաց։ Դա Դ. աբեղան է, որը առ այժմ սկսել է խաղաղութիւնը խռովութեան դարձնել, միաբանութիւնը անմիաբանութեան։

Սրա մասին լրագիրներում հրատարակվեցաւ թէ գիտէ կատարեալ ճանաչողութիւն, որը կարող է ազատ դաս տալ ցանկացողներին։ Այդ կարծիքը սխալ է։ Եթէ ամեն մէկը այդպիսիներից ուսուցանող լինի, ապա ուսանողը ո՞վ պէտք է լինի։ Ես կարճ կերպով խորհուրդ կը տամ այդ արհեստը գիտենալ ցանկացող լօռեցիներին, որ ուղղակի գիմեն Զալալօղլի բարեկրօն Գալուստ քահանային, որ էջմիածնում երկու տարի աշխատել է և կատարելագործվել։

Դ. աբեղան առ այժմ վանքի մէջ մի փոթորիկ է հանել, որից յուսահատված աշխատասէր ծերունի Մժեժեանցը, կամենում է ուսումնարանը բարձի թողի անել։ Մենք խնդրում ենք ում հարկն է, այս ցաւալի իրողութեան առաջը առնել շուտով, որ մի գուցէ Հ. Մժեժեանցի հեռանալովը ուսումնարանը փակվի և լօռեցի խեղճ երեխայքն էլ մնան զուրկ մասնաւոր ուսումից։

Ծ. Թ. Ք.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

24 մայիսի

Մի բաւական տխուր օր, երբ ընութեան բոլոր վայելչութիւններով զարդարված երջանկայիշատակ Ներսէս Ե-դ կաթողիկոսի անկած անտառից վերադառնում էի և հանիւ հասած Գայեանէ կուսի եկեղեցու մօտ, տեսայ, որ մի փոքրիկ գերեզմանոցի մէջ նստած ողբում էր չատ տխուր եօթանասուն և հինգ տարեկան մի ծերունի, որի գլուխը և մօրուքը ձիւնից աւելի սպիտակ էին։ Սա Ալաշկերտի Մանկասար գիւղացի Բաղէն էր, որը իր վաթսուն և հինգ տարեկան ամուսնու գերեզմանի առջև խոնարհած, արտասուաց կաթիլներ ցողեցնելով իր խոշոր, սևորակ և փայլուն աչքերից, լուանում էր իր կեանքի մէջ նուիրական ընկեր համարած ամուսնու Մէյրէի (Մարիամի) գերեզմանը. քանի մի բօպէ լուռ և անվրդով նայելուց յետոյ, հարցրեցի պատկառելի ծերունուն, ինչու կուլաս հայրիկ։ «Իմալ չը լամ, պատասխանեց նա, սիրտեսի կը ցաւի, ասիկայ իմ օղլուշաղիս գերեզմանն է, որը էնա գացած տարի մը դաղթելու ջախ յըմէնէն առաջ մեռաւ էնայ ջոջ ծառին քով», ցոյց տալով մեզնից սակաւ հեռու լճակի ափում գտնվող մի բաւական տեսքով ծառի (ակացիա), որը զարդարված էր սպիտակ ծաղիկներով, և հետևաբար ձեռքէս բռնած ստիպում էր գնալ իր հետ և նստել մի քառորդ ժամ այն ծառի տակ, որը իր ամուսնու մահվան վերջին բօպէն կը յիշեցնէր աշխարհի մէջ նմանը չը տեսնված թշուառ ծերունուն. առանց ուշանալու հետևեցի ծերունի Բաղէին, և երբ հասանք ամուսնու հոգին աւանդած տեղ մի ծանր և շատ տխուր հառաչանքով աչքերը տնկած երեսխ ասաց. «աղպար, խոխ թալ էդայ գլխուս, յիմալ էնէմ մըր օղլուշախ մեռաւ էդայ նշխուն ծառին քով մըղի լը թորելան էդմալ, էնայ տեղէն քոչեցինք գացինք դէյ Օշական, էնայ տեղ լը մեռաւ մըր տանըվութ տարվան խըչոյ (խաչատուր) տղան, էնայ տեղէն լը քոչեցինք գացինք խաչոյ Քեահի թաժայ գեղ, էնայ տեղէ լը կայն նա չը յուսահատվեցաւ երբէք նախկին վանահոր անմարդավայել արարմունքներից. դարձեալ գործում էր անդադար։

Իսկ ահա մի ամբողջ տարի է որ ինչպէս վանքը, նոյնպէս և ուսումնարանը կերպարանափոխվեցան. գործողութեան մեծ արգելքը հեռացաւ, ատելութիւնը անհետացաւ։ Մի փոքր ժամանակ չնորհիւ նոր վանահոր վանքի մէջ թագաւորեց խաղաղութիւն, կատարեալ միաբանութիւն։ Ասացի մեծ արգելքը հեռացաւ, բայց չը յիշեցի թէ նրա պոչը մնաց։ Դա Դ. աբեղան է, որը առ այժմ սկսել է խաղաղութիւնը խռովութեան դարձնել, միաբանութիւնը անմիաբանութեան։

Սրա մասին լրագիրներում հրատարակվեցաւ թէ գիտէ կատարեալ ճանաչողութիւն, որը կարող է ազատ դաս տալ ցանկացողներին։ Այդ կարծիքը սխալ է։ Եթէ ամեն մէկը այդպիսիներից ուսուցանող լինի, ապա ուսանողը ո՞վ պէտք է լինի։ Ես կարճ կերպով խորհուրդ կը տամ այդ արհեստը գիտենալ ցանկացող լօռեցիներին, որ ուղղակի գիմեն Զալալօղլի բարեկրօն Գալուստ քահանային, որ էջմիածնում երկու տարի աշխատել է և կատարելագործվել։

Դ. աբեղան առ այժմ վանքի մէջ մի փոթորիկ է հանել, որից յուսահատված աշխատասէր ծերունի Մժեժեանցը, կամենում է ուսումնարանը բարձի թողի անել։ Մենք խնդրում ենք ում հարկն է, այս ցաւալի իրողութեան առաջը առնել շուտով, որ մի գուցէ Հ. Մժեժեանցի հեռանալովը ուսումնարանը փակվի և լօռեցի խեղճ երեխայքն էլ մնան զուրկ մասնաւոր ուսումից։

Ծ. Թ. Ք.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

24 մայիսի

Մի բաւական տխուր օր, երբ ընութեան բոլոր վայելչութիւններով զարդարված երջանկայիշատակ Ներսէս Ե-դ կաթողիկոսի անկած անտառից վերադառնում էի և հանիւ հասած Գայեանէ կուսի եկեղեցու մօտ, տեսայ, որ մի փոքրիկ գերեզմանոցի մէջ նստած ողբում էր չատ տխուր եօթանասուն և հինգ տարեկան մի ծերունի, որի գլուխը և մօրուքը ձիւնից աւելի սպիտակ էին։ Սա Ալաշկերտի Մանկասար գիւղացի Բաղէն էր, որը իր վաթսուն և հինգ տարեկան ամուսնու գերեզմանի առջև խոնարհած, արտասուաց կաթիլներ ցողեցնելով իր խոշոր, սևորակ և փայլուն աչքերից, լուանում էր իր կեանքի մէջ նուիրական ընկեր համարած ամուսնու Մէյրէի (Մարիամի) գերեզմանը. քանի մի բօպէ լուռ և անվրդով նայելուց յետոյ, հարցրեցի պատկառելի ծերունուն, ինչու կուլաս հայրիկ։ «Իմալ չը լամ, պատասխանեց նա, սիրտեսի կը ցաւի, ասիկայ իմ օղլուշաղիս գերեզմանն է, որը էնա գացած տարի մը դաղթելու ջախ յըմէնէն առաջ մեռաւ էնայ ջոջ ծառին քով», ցոյց տալով մեզնից սակաւ հեռու լճակի ափում գտնվող մի բաւական տեսքով ծառի (ակացիա), որը զարդարված էր սպիտակ ծաղիկներով, և հետևաբար ձեռքէս բռնած ստիպում էր գնալ իր հետ և նստել մի քառորդ ժամ այն ծառի տակ, որը իր ամուսնու մահվան վերջին բօպէն կը յիշեցնէր աշխարհի մէջ նմանը չը տեսնված թշուառ ծերունուն. առանց ուշանալու հետևեցի ծերունի Բաղէին, և երբ հասանք ամուսնու հոգին աւանդած տեղ մի ծանր և շատ տխուր հառաչանքով աչքերը տնկած երեսխ ասաց. «աղպար, խոխ թալ էդայ գլխուս, յիմալ էնէմ մըր օղլուշախ մեռաւ էդայ նշխուն ծառին քով մըղի լը թորելան էդմալ, էնայ տեղէն քոչեցինք գացինք դէյ Օշական, էնայ տեղ լը մեռաւ մըր տանըվութ տարվան խըչոյ (խաչատուր) տղան, էնայ տեղէն լը քոչեցինք գացինք խաչոյ Քեահի թաժայ գեղ, էնայ տեղէ լը մըր երկու ջոջ տղաներ աշնան գացին մըր երկիր չիտեմ յիմալ եղան, էնոնք գացին լը չեկան, մըկայ թաժայ գեղի մէջ էրեք էդմայ ճիժ կէ, էրկու աղջիկ մէկ լը տղայ, համայ էնոնք լը էդայ երկիր եկած օրէն կը դողցնեն, կը վախնամ էնոնք լը քաղցածութենէ էնայ տեղ դողնալով մեռնին. խոխ գայ իմ արևուս, մալ, դոլվաթ մըղի չատ կեր մըր թարաֆ, էնոնք յըմէն թորկենք քրթերու քով համայ փախանք. մըկայ բան մը չունինք, ձեռսի մէջ ծոցուս անօթի մացած չիյտեմ յիմալ էնէմ դոր էթամ, կըսեն ուռուսի թաքոր էնոր յոտացը մեռնեմ, մըր թարաֆի խալխի խամար փարայ է ղրկեր մըղի փայ չը խասերայ, էնայ փարայէն, մենք լէ անօթի կը ջարդվենք, սըթար մը չը կայ վըր մըղի, էնայ թաքորու խրկած փարաներ վերու քով կը պախվի, էնոր տուն դոր ա մենք լէ էրթանք աղաչենք պաղատենք, ոտացնին քով պագնենք բալքայ մըղի խամար լէ փայ խասնի մենք լէ մալ գնենք էնայ մըր խիւանդ մըր էթեմ ու անտէր ճրժերուն մըր էրկիր տանելու ճար էնէնք, ինչ ընեմ յըմէն գացին ես ու իմ ճրժեր մացինք, մալ չը կայ մըղի, մարդ լէ չը կայ մըղի նայի բա ես յիմալ էնեմ....»

Այս ամեն մի բառը, ազնիւ ընթերցող, արտասանելուս արցունքներով կը թրջէր անբաղդ ծերունին իր ճերմակ մօրուքը. այն սարսափելի թշուառութիւնը, որին ենթարկված է ներկայ պատերազմի պատճառով ծերունի Բաղէն կենդանի վկայ են նրա արիւնախառն արցունքը և տխուր վիճակը, որը իրաւի մարդկային գրիչ անկարող է նկարագրել հանգամանօրէն։ Ես մի նուիրաբերութիւն երբէք արած չեմ ներկայ պատերազմի պատճառով հազարներով թշուառացածներին, ահա ես էլ կատարեցի իմ պարտականութիւնը, մօտս գտնված մի քանի կոպէկները ծերունու ձեռքը դնելով, ցոյց տուի տեղական պօլիցիան և հեռացայ, այսուհետև մեծ վստահութիւն ունեմ, որ մեր մասնաժողովի յարգելի անդամները ուշ կը դարձնեն չատ տեղեր անօգնական մնացած մեր Տաճկաստանից գաղթած եղբայրների վրա։

Վաղարշապատցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 30 մայիսի

Մեծ ուրախութիւն պատճառեց ինձ, երբ կարդացի «Մշակում» պ. Մ. Փորթուգալեանի յօդուածը Կ. Պօլսի «Արարատեան» ընկերութեան յայտարարութիւնը և ձեր առաջնորդող յօդուածը Վանի գիշերօթիկ վարժարանի առիթով։ Լաւ գիտենալով, որ Հայաստանի հարստահարված և կիսաշունչ եղած ժողովրդի կրկին վերականգնող և չունչ տվող գլխաւոր զէնքերից մէկն էլ ուսումն է, այդ պատճառով սորբ պարտք համարեցի, որ իբրև ուսանող, ես էլ իմ աշխատութեան լուման գցեմ այդ գանձանակում։ Լսելով որ իմ ծանօթ երիտասարդ պ. Արշակ Բաբեանը արդէն տպագրված թերթեր է պատրաստել Վանի վարժարանի օգտի համար ստորագրելու, դիմեցի նրան և խնդրեցի թերթերից մէկը, որը ինձ տվեց իսկոյն, որ հաւաքելուց յետոյ յանձնեմ «Մշակի» պ. խմբագրին։ Ուրեմն խնդրեմ ընդունեցէք փոքր որ ընդամենը տասն և չորս (14 ռ.) ռուբլ և 90 կոպէկ է և հասցրէք ուր հարկն է, յայտնելով հրապարակաւ խորին շնորհակալութիւնս նուիրատուներին որոնք են. Մի ոմն հայ — 3 ռ., Մանթաշեանց և Բէհրութեանց — 1 ռ., Բակլանեան — 1 ռ., Իսահակ Խաչատուրեանց — 1 ռ., Ալէքսի Շաքարեանց — 1 ռ., Պետրոս Սարուխանեանց — 1 ռ., Գարասիմ Մելիք-Նուբարեան — 1 ռ., Նիկոլայ Մելիք-Հախնազարեանց — 50 կ., Յովհաննէս Շադինեանց — 50 կ., Ավետիք Առաքելեանց — 50 կ., Սահաթսազեանց

---

*) Խաչոյ Քեահի գիւղը բաղկանում է մի քանի տուն ընտանիքից որոնք գաղթած են վերջին միջոցներս Շօրագեալից (Շիրակից). այդ գիւղը գտնվում է Եղվարդի հիւսիսային կողմում և պատկանում է Ս. Էջմիածնին։

—50 կ., Փաղօ Փարեմուզեան—40 կ., Դաւիթ Իսատամանեանց—40 կ., Ղազարոս Տէր-Ղազարեանց—25 կ., Կարապետ Ղարիբեան—25 կ., Գրիգոր Մանթաշեան—20 կ., Յական Ստեփանեանց—20 կ. և Կոստանդին Աբգարեանց—20 կ.

Իդեալական ուսումնարանի երրորդ դասատան ուսանող Յովհաննէս Սարաջեան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Զարեքայ վանքի եկամուտները Գանձակի ուսումնարաններին յատկացնելու համար մի քանի անգամ խնդիրք է ներկայացրած, բայց ոչինչ հետևանք չէ ունեցել։ Թէ ուր են գնում այդ եկամուտները, դրա մասին ես ձեզ չատ ցաւալի իրողութիւններ կարող էի պատմել, բայց առ այժմ աւելորդ եմ համարում, որովհետև նրանք, որոնք պէտք է ուշադրութիւն դարձնէին այդ գործի վրա, իրանց կոյր են ձևացնում, երևի անշահասէր նպատակներից դրդված»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են որ հոգևոր կառավարութեան քարտուղարը տարել է իր հետ Էջմիածին մի քանի անկիրթ տիրացուներին քահանաներ ձեռնադրելու համար։ Ասում են, որ իւրաքանչիւր տիրացու մանր ծախսերի համար իր հետ տարել է 400—500 ր.։ Այդ տիրացուների գիտութեան մասին գաղափար կազմելու համար նամակագիրը պատմում է, որ տիրացուներից մէկը, կանգնած խաչելութեան առաջ, հարցնում է մի վարդապետից «Ես հինչ պատկեր ա, ա հայր սուրբ»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Այստեղ կազմվեց առողջապահական ընկերութիւն, որի նախագահ ընտրվեցաւ հիւանդանոցի նախագահ Բատղեվիչ։ Այս ընկերութիւնը իւրաքանչիւր փողոցում նշանակել է մի թաղապետ, որի պարտականութիւնն է հսկել, որ բնակիչները մաքուր պահեն թէ տների բակերը և թէ փողոցները։ Ընկերութեան վարչութիւնը մինչև հիմա երկու նիստ է ունեցել։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր սրանից առաջ դիմակաւոր աւազակներ գիշերով մտնում են մի ախալքալաքցու տուն, վիրաւորում են տանտիրոջ և իր տիրին, կողոպտում են տունը և փախչում են։ Աւազակների հետքը դեռ չեն գտել։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԷՍ Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Թէպէտ մենք խոստացանք ձեզ «Հրեղէն կոմս» կենսագրութիւնը (Նարբէյ Ինշանակում է Հրեղէն կոմս), բայց մենք աւելի յարմար և նշանաւոր ենք համարում նախ և առաջ խօսել այժմեան Կ. Պօլսի հայոց պատրիարքի մասին։

Ներսէսը ծնվեցաւ Խասգիւղում, Կ. Պօլսի արուարձանում, 1837 թւի յունվարի 28-ին։ Նա կատարեալ հետևող եմ Սէն-Բէվի կենսագրութիւններ գրելու եղանակին։ Առաջ քան թէ մի որ և իցէ անձնաւորութեան խարակտերիստիկը և կենսագրութիւն սկսելը, նա մտադրութեամբ ուսումնասիրեց այն շրջանը որտեղ նա ծնվեց, մեծացաւ և կրթութիւն ստացաւ։ Թիւրքաց Խասկեօ խօսքը նշանակում է գեղեցիկ գիւղ և ազգային բանաստեղծները նրան վիզանտիական Աթէնք անուանեցին, այն ազդեցութեան համար, որ այս տեղը ունէր մայրաքաղաքի հայ երիտասարդութեան վրա։

Երբ Ներսէսը ծնվեցաւ, Խասգիւղը արդէն ազգային զգացմունքները զարթեցնելու գործի մէջ ամենագլխաւոր դեր էր խաղում։ Այնտեղ գտնվում էր մի փոքր ակադէմիա և շատ ուսումնարաններ։ Այդտեղ կրթութիւն ստացաւ երիտասարդ Վարժապետեանը (այդպէս է նրա ազգը) և այս լուսաւորված շրջանը արդիւնաւոր ազդեցութիւն ունեցաւ ապագայ պատրիարքի և ազգային օգտակար գործողի վրա։ Առածն ասում է tel pays, tel homme.

Մանկութենից նա գերազանցվում էր իր հետաքրքրութեամբ և նշանաւոր ընդունակութիւններով համեստութեան և պարզ ուրախամտութեան հետ միասին։ 13 տարեկան հասակում նա գերազանցեց իր բոլոր ընկերներին. նա անգիր արեց Հոմերոսի ամենալաւ տեղերը. 15 տարեկան հասակում նա արդէն հիմնաւորապէս գիտէր Ֆրանսիերէն, լատիներէն և յունարէն լեզուները. նա շատ էր կարդում և մանաւանդ սիրում էր Բոսիւէտին, Ֆէնէլոնին և Լամենէին, որոնց համեմատում էր յոյնաբաբելեան եկեղեցու հայրերի հետ։ 20 տարեկան հասակում նա աջողութեամբ ըսկսում է ուսուցչութիւն անել մայրաքաղաքի հոգևոր դպրոցներում, նրա այն ժամանակվայ աշակերտները այժմ մայրաքաղաքի ամենալաւ քարոզիչներ և գաւառական հոգևորականութեան ամենալաւ անդամներ դարձան։ 24 կամ 25 տարեկան հասակում, ծնողների պահանջին զիջանելով, նա աշխարհը վերադարձաւ և պսակվեցաւ։ Յետոյ մենք կը տեսնենք, որ այս պսակը ոչ թէ ազդից օգտակար հասարակաց գործողին խլեց, այլ նրան աւելի հաստատութիւն, եռանդ և հանգստութիւն տուեց։ Աւելորդ չէր լինի մեր աբեղաների համար, եթէ ուշադրութիւն դարձնէին այս օրինակի վրա։

Կնոջ մահից յետոյ, Վարժապետեանը հայր Ներսէս դարձաւ. մանաւանդ որ մանկութենից այս էր նրա ներքին ձգտումը։ Այս անգամ ծնողները չարգելցին նրան այդ բանը։ 1870 թւին նա վարդապետ ձեռնադրվեց և ահա այդտեղից է սկսում նրա անդադար բարձրանալը։ Հայոց ազգային ժողովը տալիս էր նրան ամենափափուկ յանձնարարութիւններ, որոնց նա միշտ հմտութեամբ և խղճմտանքով էր կատարում։

Նա լաւ ընդունվեցաւ Օտտոմանեան հասարակութեան բարձր շրջաններում (մանաւանդ հանդուցեալ Ալի և Ֆուատ-փաշաներից), որոնք գնահատում էին նրա խելքը, գիտութիւնը խոհեմութիւնը։ Պէտք է ասել որ Ներսէսը հիանալի կերպով խօսում է սաճկայ սալոնական և հարեմական լեզուով։ Նրան յանձնարարութիւն էր տրված Մօլդո-Վալախիայի հայերի մօտ, ուր իշխան Կարլը արժանացրեց նրան ճաշի հրաւիրելու, և ներկայ գտնվեցաւ նրա քարոզին, որ դա մի չեղած պատիւ էր այնտեղի հայերի համար։ Յետոյ նա Կիլիկիա ուղարկվեցաւ, ուր տեղական պատրիարքի անընդունակութիւնը շատ թշուառութիւնների պատճառ էր դարձել հայերի համար։ (Զը նայելով հայոց եկեղեցու միութեան վրա, յայտնի է որ նա երկու պատրիարքներ ունի պատմական հանգամանքների պատճառով, որոնց մասին յիշելը տեղը չէ։ Որպէս զգոյշ և խոհեմ, նա հայ կաթոլիկների պատրիարք Հասունի բոլոր խարդախութիւնները երևան հանեց։ Այս կուսի մէջ յաղթութիւնը ազգային կրօնի պաշտպանի կողմը մնաց։

Այս ժամանակից Ներսէսի համար ճանապարհ բացվեցաւ դէպի պատրիարքութիւն։ Տարաբաղդաբար հայոց եկեղեցում ընդունված մի քանի ծէսերի կատարելու մէջ նրա ունեցած աննշան սխալը թշնամիներ յարուցեց նրա դէմ, որոնք արդիւք եղան նրան հասնելու այդ բարձր աստիճանին. Նրան եպիսկոպոս ձեռնադրեց Կիլիկիայի պատրիարքը, և ոչ թէ Էջմիածնի կաթողիկոսը և այս բանը հայ-կղերականներին առիթ տուեց կասկածել նրան բաժանականութեան մէջ։ Ասում են որ Խորէն Նարբէյ մնանակից էր այս խարդախութիւնների մէջ։ Թիֆլիսի բնակիչները պէտք է որ յիշեն, թէ ինչպէս 5—6 տարի առաջ Թիֆլիս ժամանեց մէկ խոհեմ եպիսկոպոս, ուղևորվելով Էջմիածին, իր ակամայ սխալը ջնջելու համար։ Ասում են որ այդ ժամանակից Գէորգ IV-ը կապված է նրա հետ անկեղծ բարեկամական կապերով։

Ամենքը յիշելիս կը լինեն Խրիմեանի բարձրանալը և ընկնելը։ Դեռ նրա պատրիարքութեան ժամանակ ամենքը ուշադրութիւն դարձրին Նիկոմեդիայի թեմական առաջնորդի վրա (Ներսէսը այն ժամանակ այս նշանաւոր թեմի եպիսկոպոս էր), որպէս ապագայ պատրիարքի վրա, այնպէս որ, չը նայելով Խրիմեանի ժողովրդականութեան և նրա սուրբ կեանքի վրա, նա չունէր կառավարչական ընդունակութիւններ։ Վերջապէս 1874 թւին, Խորէնի նախանձորդը, Հասունի հակառակորդ Ներսէսը, այս ծանր ժամանակին ազգային կրօնի վերականգնողը, պատրիարք ընտրվեցաւ։ Ներսէսը մինչև այժմ փառաւորապէս կառավարում է Կ. Պօլսի պատրիարքութիւնը. Ներսէսին չէ կարելի յանդիմանել ոչ մի վարմունքի համար, որ անյարմար լինէր նրա բարձր աստիճանի արժանաւորութեան, ոչ մի զանցառութեան համար իր պարտականութիւնների կատարելու մէջ։ Նա վայելում է Թիւրքիայի և բոլոր Եւրոպայի պետական մարդիկների յարգանքը. նրան արժանացրեց իր բարձր ուշադրութեան, Նորին Բարձրութիւն Դունայի զօրքի գլխաւոր հրամանատարը։ Մի խօսքով Ներսէսը հանգամանքների յարմարվող մարդ է, ոչ թէ իր անձնական շահերի, այլ իր հայրենիքի բարօրութեան համար։

Մեր բոլոր ասածները Ներսէսի մասին այս կարճ տեսութեան մէջ համառօտելով, մենք կրկնում ենք, որ այս մարդը քաղաքագիտական ընդունակութիւններ ունի, որոնք մանաւանդ նրա հօտի ներկայ թշուառ դրութեան ժամանակ երևեցան։ Նրա միջնորդութիւնը Մեծ Իշխանի մօտ Սան-Ստէֆանօի դաշնագրութեան մէջ XVI յօդուածը մոցնելու համար, նրա յաճախակի բողոքները Բ. Դրան առաջ քուրդերի կատարած բարբարոսութիւնների մասին, որոնք մինչև անգամ առիթ տուեցին Ֆրանսիայի և Անգլիայի դեսպաններին խառնվելու, վերջապէս զգոյշ և վերին աստիճանի համարձակ պատգամաւորութիւնը հայերի կողմից, որի մասին արդէն բոլորին յայտնի է, այս բոլորի համար Թիւրքաց հայերը պարտական են Ներսէսին, որը իր հնարագիտութեամբ և այն կախարդանքով, որ նա ունի Թիւրքաց կառավարութեան առաջ, կարողացաւ քնացնել նրա կասկածները։

Ասում են, ի միջի այլոց, որ Միթհադի հայրենասիրական փորձերը Ներսէսի ազդեցութեամբն էին, որը մասամբ Միթհադի սահմանադրութեան խմբագիր էր, Շէյխ-ուլ-իսլամի հետ միասին։

Հեռանալով Պլուտարքոսի կենսագրական ոճին, մենք կատարած չէինք լինի այդ, եթէ չանէինք համեմատութիւն երեք բարձրաստիճան հոգևորականների՝ Խրիմեանի, Խորէն Նարբէյի և Ներսէսի մէջ։ Նարբէյն մի սալոնական պարոն է XVII և XVIII դարերի կաթոլիկական նորաձև abbés-ների նման Ֆրանսիայում։ Ներսէսը ունի երևելի Ռիշելիոյի շքոյլի հոգևորականների կերպարանք—քաղաքագիտական նրբութիւններ ունեցող մարդ է։ Խրիմեանը հայութեան Սավանարօլա է, կամ ժողովրդական Լամենէ։ Երեքը միասին մի ընդհանուր յատկութիւն ունեն, այն է կրթութիւն և լուսաւորեալ միտք, և այս հանգամանքում նոքա կանգնած են բոլոր հայոց հոգևորականութեան գլխին։

Ասում են, որ Ներսէսը հայ-լուսաւորչական եկեղեցու ամենանշանաւոր աստուածաբանութեան վարդապետ է, և յիրաւի, նրա վիճաբանութիւնները բողոքականների և կաթոլիկների հետ ապացուցին նրա հմտութիւնը աստուածաբանական հարցերում։ Սա աստուածաբանական շքոյլի վերջին ներկայացուցիչն է, որի գլխին կանգնած էր հանգուցեալ Մատթէոս պատրիարքը և որի ծաղկելու ժամանակը հայոց գրականութեան ոսկէ դար է անուանվում։

Եթէ Խրիմեանը գիտէ դառնալ դէպի ժողովուրդը, շարժել և գրգռել նրան իր փոխաբերական և մի փոքր զգայուն պերճախօսութեամբ—Ներսէսը ներգործում է հաւատի մէջ թուլացած լուսաւորեալ դասակարգերի վրա և դարձնում է նրանց քրիստոնէական եկեղեցու գիրկը։ Մի խօսքով Ներսէսը, հարուստների և կրթված դասակարգերի քարոզիչ է։ Իսկ Խրիմեանը ժողովրդական քարոզիչ է—անկիրթ և աղքատ դասերի։ Ինչ որ վերաբերում է Նարբէյին, նա հաւատարիմ է «Հրեղէն կոմս» մականուան, նա ոգևորում է հայ պարիզուհիների սրտերը և դարձնում է նրանց ուղիղ ճանապարհի վրա իր գոյնաւոր, երբեմն մինչև անգամ բանաստեղծական ձառերով սալօնական գոյներով։

Մի այլ ընդհանուր բան էլ կայ այս բարձրաստիճան հոգևորականների մէջ. դրանք բոլորն էլ ազգային ուսումնարանների կազմակերպողներ և ուսուցիչներ են։ Նոքա իրաւացի կերպով ժողովրդականութիւն ստացան հիմնելով օրինակելի հոգևոր դպրոցներ։ Նրանց շնորհով այժմ Թիւրքաց հայերը ունեն մօտ 10 միջնակարգ ուսումնարաններ, որոնք ի հարկէ ստոր են եւրոպականներից և ռուսականներից, բայց այնու ամենայնիւ նշանաւոր կերպով կատարելագործված են։ Նարբէյ Փարիզի լիցէյի և Թէոդոսիայի նշանաւոր հոգևոր ուսումնարանի հիմնողներից մէկն է։ Նրա գործունէութիւնը Թիւրքիայում մանաւանդ յայտնի է որպէս ուսուցչի. նրան պարտական են Կ. Պօլսի արուարձանի Բէրայի և Բէշիկտաշի հոգևոր դպրոցները իրանց բարեկարգութեամբ։

Խրիմեանը Վարագեան օրինակելի հոգևոր դպրոցի, Վանի, Երզրումի և Երզնկեանի մի քանի միջնակարգ դպրոցների հիմնադիր է։

Ներսէսը ուսումնարաններ հիմնեց Ադանայում, Տարսօնում (Կիլիկիա) և Նիկոմեդիայի մէջ։

(Тифл. Вѣстн.)

ԱՒՍՏՐԻԱ

Աւստրիական պատգամաւորների ժողովում, կոմս Անդրաշի մայիսի 28 (16)-ին կարդաց մի գրութիւն որով բացատրում է թէ ինչի շատ հարկաւոր է այժմ շուտով գործածել 60 միլիոն կրէդիտի մէկ մասը։ Աւստրիական պետութիւնը, ասում է Անդրաշին, չը պէտք է որ ընկնի այն դրութեան մէջ որ ենթարկվի այլ պետութիւնների բարոյական ազդեցութեանը։ Նա պէտք է որ կարողանայ գործել իր համար։ Կարելի է որ խառնակութիւններ պատահեն եւրոպական հարցերի պատճառով, եթէ համաձայնութիւն անդամ կայանայ, երբ այդ հարցերը վանդի ենթարկեն մեր սեփական շահերը։ Կառավարութեան անելու նախնական զգուշութիւններն են ամրացնել Դալմացիան և Տրանսիլվանիան և հարկաւոր եղած ժամանակ, ուղարկել պատերազմական ոյժեր մեր հաղորդակցութիւնները ապահովացնելու համար։ Կօնգրէսը շուտով կը գումարվի, որի հրաւէրը մեծ ուրախութեամբ ընդունված է աւստրօ-ունգարական կառավարութենից։ Մեզ համար շատ հարկաւոր է եղած պահպանել մեր ունեցած շահերը, ինչպէս Դունայի նոյնպէս և մեր զանազան նահանգների Արևելքի հետ հաղորդակցութեան գծերի վրա։ Աւստրօ-Ունգարական կառավարութեան միակ նպատակն է Եւրոպայի խաղաղութիւնը և իր սեփական շահերի պաշտպանութիւնը։

Կոմս Անդրաշին ցոյց տալով թէ կառավարութեան քաղաքականութիւնը ոչինչ փոփոխութիւն չէ կրած, խնդրել է հարկաւոր կրէդիտի մէկ մասի գործածութիւնը վճռել։ Ունգարական պատգամաւորների ժողովը պրոշել է ապագրել և ամենին բաժանել կոմս

Անդրաշի բացատրութիւնը որ ուղարկվել է բիւրժէտային մանաժողովին։ Կոմս Անդրաշին պատասխանելով պ. Բոնհիրդի մի հարցումին, յայտնել է թէ պատրաստ է խորհրդարանին ներկայացնել պաշտօնապէս Սան-Ստէֆանոյի դաշնագրի բնագիրը և խոստացել է բացատրութիւններ տալ դաշնագրի այն կէտերի վերաբերութեամբ, որոնք հակառակվում են աւստրիական շահերին։

Լրագիրները հաղորդում են որ Ռուսաստանը և Աւստրիան իրար մօտենալով իրանց պահանջների մէջ, բաւականին համաձայնվել են. այնու ամենայնիւ կան մի քանի կէտեր որոնց մէջ դեռ հեռու են գանվում իրարից, մասնաւորապէս Անտիվարի նաւահանգստի հարցը, Զերնոգօրիան պահանջում է այդ նաւահանգիստը. Ռուսաստանն էլ կամենում է տալ այդ Զերնոգօրիային և համարում է այդ զիջողութիւնը իբրև փոխարինութիւն Եգէեան ծովի բոլգարական նաւահանգիստներին որոնցից պէտք է հրաժարվի եթէ իր և Անգլիայի մէջ վճռական համաձայնութիւն լինի։

Աւստրիան գրաւած է Ադա-Կալէի ամրոցը Բ. Դրան և իր մէջ եղած մէկ մանաւոր դաշնադրութեան համեմատ։ Ադա-Կալէի ամրոցը շինված է մի փոքրիկ կղզու վրա, Դունայի մէջտեղ և Օրսօվայի հանդէպ։ Որովհետև այդ ամրոցի գիրքը այնպէս է որ նրան իր ձեռքում ունեցողը տիրում է Դունայի նաւարկութեան, Աւստրիայի շահը պահանջում էր չը թողնել որ այդ ամրոցը ընկնի ոչ Սերբիայի, ոչ էլ նոր Բոլգարիայի ձեռքը։

Բոսնիացի գաղթականների հայրենիք վերադարձի համար Բ. Դրան հետ բանակցութիւնները նորից են սկսվել և այս անգամ յոյս կայ որ աջողվեն։ Աւստրօ-Ունգարիան գաղթականներին իրանց հայրենիքը վերադարձնելու համար կը գրաւի Բոսնիայի մէկ մասը, բայց Թիւրքիայի հետ համաձայնութեամբ և նրա զօրքերի գործակցութեամբ։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

—

Աթէնքից մայիսի 16-ին գրում են «Indépendance Belge» լրագրին հետևեալը։ «Թիւրքիան պահանջած էր Ցունաստանի կառավարութենից որ Թիւրքիա եկած յոյն կամաւորների խումբերը յետ կանչի և սպառնացած էր իր պահանջները գործադրել տալ պատերազմական նաւեր ուղարկելով դէպի Ցունաստանի ծովեզերքները։ Բ. Դուռը կատարեց իր սպառնալիքը. Թիւրքաց նաւատորմը Հօբարտ-փաշայի հրամանատարութեամբ դուրս եկաւ Դարդանէլից և Եգէեան ծովի վրա երթևեկելով սկսեց սպառնալ Ցունաստանին։ Անգլիան էլի միջնորդեց և հասկացրեց Աթէնքի կաբինէտին թէ այն անխոհեմ բաղդախնդրութիւնը որին ձեռնարկած էր նա իր խորհուրդների հակառակ, ինչ վատ հետևանքներ կարող էր ունենալ։ Ցունաստանի այդ ընթացքը նամանում էր արդէն բացված դուռը խորտակելով բանալ աշխատելու։ Մինիստրները իրանք էլ ցանկանում էին որ և իցէ պատճառ գտնել որ իրանց ազատեն այդ սխալ դրութենից. նրանք գիտէին որ ապստամբական շարժումները չէին աջողվի, որովհետև յանկարծ և անպատրաստ սկսվել էին։ Նրանց դիտաւորութիւնը այն էր որ Սան-Ստէֆանոյի դաշնագիրը հաստատված ժամանակ երբ յոյներն էլ ապստամբական շարժումներ անեն Եպիրոսում, Թէսալիայում և այլն, ի հարկէ յունական հարցն էլ կը ներկայացվի եւրոպական կոնգրէսին։ Բայց կոնգրէսի կայանալը ուշացաւ և յոյների ապստամբական շարժումները չէին կարող երկար տևել, որովհետև արդէն պատրաստութիւններ չէին ունեցել և չէին յուսայ որ դիպլոմատիական բանակցութիւնները այսչափ երկարաձգվէին։ Թիւրքահպատակ յոյներից շատերը այդ նահանգներում չը մասնակցեցին ապստամբութեան և չուզեցան զէնք բարձրացնել, որովհետև շատ վստահութիւն չունէին իրանց ազատարարների վրա, որոնք յանկարծ և անպատրաստ երևան եկան։ Բայց Թիւրքիան սկսել էր իր ոյժերը ամփոփել յոյների դէմ, մինչև որ յոյն կամաւորների պարագլուխները իրար կապածում և երկպառակվում էին և իրանց փողերն էլ շուտով սպառել էին։ Ապստամբութիւնը գրեթէ դադարել էր և կամաւորների խումբերը արկարացած սկսում էին ցրվել երբ Անգլիան առաջարկեց իր միջնորդութիւնը։ Երկու անգլիացի պաշտօնատարներ եկան խաղաղութիւն առաջարկեցին այն կամաւորներին որոնք դեռ շարունակում էին ապստամբութիւնը։ Սրանք շուտով ընդունեցին առաջարկութիւնը առանց երկար բանակցութիւնների, որովհետև գիտէին թէ ոչինչ չունեն յուսալու Աթէնքի կողմից։ Այժմ բոլոր կամաւորները վերադարձած են Ցունաստան։ Կառավարութիւնը գինաթափ է անում նրանց սահմանագլխում։ Անգլիական մի փոքրիկ նաւ ուղարկված է այդ խումբերի մնացորդը այստեղ բերելու համար։ Թիւրքիան իր խոստումի համեմատ ներողութիւն շնորհեց բոլոր տեղացի բնակիչներին որոնք մասնակցել էին ապստամբութեան և հրաւիրեց գաղթականներին վերադառնալ իրանց հայրենիքը, խոստանալով պաշտպանել նրանց կեանքը և սեպհականութիւնը։ Ցունաստանում գտնված այդ գաղթականների դրութիւնը շատ ողբալի է. կառավարութիւնը ոչինչ չէ կարող անել նրանց համար. մանաւորների նուէրներն էլ չեն կարող փոխարինել նրանց կրած վնասները և Թիւրքաց կառավարութիւնը, յայտնի է որ նրանց չէ վերադարձնի իրանց հարստութիւնը որ յափշտակվեցաւ բաշիբուզուկներից, ոչ էլ նորից կը շինի նրանց այրված և քանդված տները։ Այժմ Թէսալիայում և Եպիրոսում աւազակների շատ խումբեր են կազմված որոնք վնասում են բնակիչներին։

«Ռումինիայի Կարլ իշխանի կողմից մի պաշտօնատար եկաւ որ պատուանշաններ բերեց Գէորգ Թագաւորին և մինիստրներից պ. պ. Կոմունդուրոսին և Դէլիանիսին։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

—

Տրապիզոն, 3 մայիս 78

«Էրզրումի պաշարված ժամանակից սկսված է այստեղ առևտրական շարժում լինել փոքր ի շատէ։ Միայն թէ ճանապարհները բացվելուց բաւականին ժամանակ յետոյ կառավարութիւնը բոլոր ձիաները իր համար ժողոված լինելով. Տրապիզոնի նահանգի ներքին կողմեր վաճառք ուղարկելը որ և իցէ գնով գրեթէ անկարելի է եղած։ Վաճառականներին աջողվեցաւ, շատ աշխատելուց յետոյ, ունենալ մի քանի ջորի և ձի. բայց պոլիցիայի վերատեսչութիւնը իր սեփական շահերի վրա միայն հոգալով, աշխատում է, որչափ կարող է, արգելքներ հանել այդ գրաստների համարձակ գործածվելուն դէմ։ Մէկ կենդինար (180 հսխա) վաճառք Տրապիզոնից մինչև Էրզրում փոխադրելու համար 2000 ղրուշ քրեհ են առնում, 100 ղրուշնոց թղթադրամը (կայմէ) 100 ղրուշի հաշվով։ Այսպիսի տարօրինակ թանգ գնով կոնեակ և րում միայն փոխադրել կարելի էր եղած։ Բայց այժմ գները փոքր ի շատէ պակասած լինելով, կերպաս էլ ուղարկում են Էրզրում։ Այստեղ ամեն մարդ նեղանում է ապագայի անորոշ դրութենից։ Հեռաւոր տեղերի հետ առևտրական յարաբերութիւնը գրեթէ բոլորովին դադարել է և ամեն մարդ ճանձրացած հարցնում է՝ «հաշտութիւն կը լինի թէ պատերազմ։»

«Շնորհակալ եմ որ հրատարակել էիք ձեր լրագրի էջերում հայոց ազգի մէկ տեղեկագիրը քուրդերի բարբարոսութիւնների վերաբերութեամբ որ գործեցին Խնուսի կողմերում։ Ճշմարիտ, գործերի այս դրութիւնը տեսնողին երևում է թէ Թիւրքաց տէրութիւնը մի այնպիսի քաղաքականութիւն է որոշել որ պարտաւորացնէ խեղճ քրիստոնեայ գիւղացիներին փախչել դէպի ռուսաց իշխանութեան երկիրները, իրանց կեանքը ազատելու համար։ Թշուառ գիւղացիները բոլորովին կործանվեցան, մնացած լինելով քուրդերի, որոնք բոլորովին յայտնի են իրանց բարբարոսութիւններով և սարսափելի ոճիրներով և օսմանեան զօրքերի մէջ որոնք շատ չեն զանազանվում քուրդերից իրանց գողութիւններով և յափշտակութիւններով։ Այս խեղճերը երբ վերջին ժամանակներում ընկան Թիւրքաց զօրքերի ձեռքը, սկզբից ընդունեցին նրանց իբրև ազատարարներ. բայց ափսոս որ յետոյ նրանցից էլ շատ հարստահարութիւններ կրեցին։ Այդ զօրքերը առնում են ամեն բան ինչ որ կամենում են, առանց վճարելու, և այն ատելաց խիստ են վարվում ամեն կարգի գիւղացիների հետ որ խեղճ ժողովուրդը բաւում է թէ ազատեցէք մեզ մեր այս ազատարարների ձեռքից։

«Մեր ստացած տեղեկութիւնների համեմատ, չափից դուրս թշուառութեան մէջ են գտնվում Գղի նահանգում (Խարբերդի և Էրզրումի մէջտեղ է) և երկիւղ կայ որ սով էլ լինի։ Կ. Պոլսում անգլիական դեսպան պ. Լայարդ, քիչ ժամանակից առաջ, ուղարկել է 100 օսմանեան ոսկի, անգլիացիներից կազմված օգնող մասնաժողովի կողմից որպէս զի բաժանեն թշուառներին Էրզրումում և Գղիում։ Անցած ձմեռվայ միջոցում այդ մասնաժողովի կողմից ուղարկված է 450 օսմանեան ոսկի պ. Կոլին որ մինչև այժմ մնում է Էրզրումում։ Թշուառութիւնը դեռ երկար ժամանակ կը շարունակվի. հետևապէս բարեգործական շատ աշխատութիւններ դեռ հարկաւոր են։»

(Levant Herald)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Presse» լրագրին Բուխարէստից հեռագրում են, որ մայիսի 28-ին Ռումինիայի արտաքին գործերի մինիստր Կոգալնիչանո, ռուսաց դիպլոմատիական գործակատար բարոն Ստիւարտին նոր պաշտօնական գրութիւն ներկայացրեց, որի մէջ կրկին բողոք է յայտնված ռուսաց զօրքերի ռումինական ցամաքը գրաւելու դէմ։ Մի և նոյն ժամանակ Ռումինիան մեծ եռանդով շարունակում է զինաւորվել։ Նոր զինուորների հաւաքելը որը պէտք է 24,000 մարդուց լինի բաղկացած, մեծ արագութեամբ է կատարվում։ Արտասահմանից անդադար բերվում են Ռումինիա զէնքեր։ Այն զինուորները, որոնք արձակուրդ ունեն և նոյնպէս նրանք որոնք պահեստի զօրքի մէջ են հաշվում, մի քանի ժամանակ է արդէն, որ հրաման ստացան վերադառնալ իրանց ծառայութեան տեղերը։

—Վիէննայից հեռագրում են լրագիրներին մայիսի 22-ից, որ կոմս Անդրաշի ճշմարիտ հրաւէր ստացաւ կոնգրէսին ներկայ գտնվելու։ Անդրաշի ընդունեց հրաւէրը և հրամայեց իր ուղեկիցներին պատրաստ լինել մայիսի 9-ին Վիէննայից Բերլին ուղևորվելու։

—Լօնդօնից հաղորդում են լրագիրներին, որ Անգլիայի ներկայացուցիչներ կոնգրէսում կը լինեն լորդ Բիկոնսֆիլդ և մարկիզ Սալիսբիւրի։ Առաջինի մասնակցութիւնը կոնգրէսի աշխատանքների Վիէննայում վատ նշան են համարում խաղաղութեան համար։

—Վիէննայում ստացված մասնաւոր հեռագիրներից երևում է, որ անգլիական մինիստրների մէջ նշանաւոր անհամաձայնութիւններ կան։ Մարկիզ Սալիսբիւրի պահանջում է, որ անգլիական դեսպանը Կ. Պոլսում, պ. Լայարդ, փոխվի, իսկ լորդ Բիկոնսֆիլդը պաշտպանում է այդ դիպլոմատին։ Վիէննայում ամենքը ուրախանում են կոնգրէսի կայանալու համար, բայց Վիէննայի դիպլոմատիական շրջաններում չեն հաւատում, որ խաղաղութիւնը պահպանվի։ Ընդհակառակը ամենքը սպասում են, որ նոր դժուարութիւններ կը ծագեն։

—Բերլինից լրագիրներին հաղորդում են, որ բժիշկները կայսր Վիլհէլմի դրութիւնը բաւականացուցիչ են գտնում։ Կայսրը քնել է, յետոյ գինի և ջուր է պահանջել և սկսել է խօսել բժիշկների հետ իր սովորական բարեսրտութեամբ։

—Վիէննայից հաղորդում են մայիսի 27-ին հեռագրեալը։ «Կոնգրէսի հրաւիրագիրները ստորագրված են Բիսմարկ իշխանից։ Կոնգրէսը կը կայանայ Բերլինում և առաջին նիստը կը լինի յունիսի 11-ին (մայիսի 30)։ Անդրաշի կոմսը յունիսի 9-ին կը գնայ Բերլին։»

—«Agence Russe» ասում է թէ Աւստրիան գրաւած է Ադա-Կալէ մեծ պատութիւնների համաձայնութեամբ, որպէս զի Դունայի նաւարկութիւնը չարգելվի։ Կոնգրէսը կը կարգադրէ Թիւրքաց նահանգների գրաւելու խնդիրը։

—Լօնդօնից հաղորդում են մայիսի 29-ին թէ կոմս Բօսել երևելի դիպլոմատը մեռել է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 98 ր. 62 կ., երկրորդ 95 ր. 75 կ., երրորդ 95 ր. 62 կ., ներքին առաջին փոխառութեան 5% տոմսակը արժէ 237 ր. 50 կ., երկրորդ 232 ր., արևելեան 94 ր. 87 կ., ոսկին 7 ր. 96 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,87 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 211 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 260 ֆր. 50 սանտիմ։ Տրամադրութիւնը շատ ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունիսի։ «Правит. Вѣстн.» լրագրում տպված է հետևեալ բիւլետէնը Կայսրուհու առողջութեան մասին։ «30 մայիսի, 8 ժամ առաւօտեան։ Տենդային դրութիւնը պակասում է, գիշերը անհանգիստ անցկացրեց, ոյժերը չեն աւելանում. Բոտկին։»

ԲԵՐԼԻՆ, 30 մայիսի (11 յունիսի)։ Միացեալ խորհուրդը միաձայն վճռեց արձակել Կայսերական պարլամենտը։ Գիշերվայ 10 ժամին հասաւ այստեղ մարկիզ Սալիսբիւրի իր որդու հետ։ Նոյնպէս եկան լորդ Բիկոնսֆիլդ, կոմս Շուվալով և Ուբրի։ Կայսրի առողջութիւնը լաւանում է, օրվայ մասը անցկացրեց բաց պատուհանի մօտ, պարզ օդ ծծելով։

ՎԻԷՆՆԱ, 30 մայիսի (11 յունիսի)։ «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են 28-ից մայիսի։ «Ռուսաց 11-դ զօրաբաժինը մօտենում է Պօտեշտին, հասաւ Տիտուգեշտի։ Ռուսաց զօրքերի շարժումով ռումինական զօրքերը կտրված են Բուխարէստից։ Ռումինական կառավարութիւնը պաշտօնական հարցում կանի Ռուսաստանին յիշեալ շարժումի նպատակի մասին, եթէ նրան պատասխան չեն տայ, կամ կողմնակի կերպով կը պատասխանեն, Ռումինիան պետութիւններին բողոք կը ներկայացնէ Ռուսաստանի յարձակողական շարժումի դէմ։»

ԲՈԳՈՒՉԱ, 30 մայիսի (11 յունիսի)։ Զերնոգօրիայի սենատոր Միշա Վրբիցա ուղևորվեցաւ Սկուտարի Թիւրքիայի հետ ունեցած անհամաձայնութիւնները վերջացնելու համար։ Զերնոգօրցիները պէտք է իմանան, որ նրանք չանցնեն Լիմնիցա գետը։ Զերնոգօրիայի իշխանը յայտնեց Սկուտարիի Թիւրքաց նահանգապետին, որ նա կաշխատի հեռանալ անհամաձայնութիւններից, բայց եռանդով կը պաշտպանէ Զերնոգօրիայի իրական հողերը։

ԲԵՐԼԻՆ, 31 մայիսի (12 յունիսի)։ Իշխան Գորչակով, Կոմսի, կոմս Անդրաշի, մարկիզ Սալիսբիւրի և լորդ Բիկոնսֆիլդ հասան Բերլին կոնգրէսին ներկայ լինելու համար։ Պետութիւնները կը կարգադրվեն հետևեալ կերպով. Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Ռուսաստան և Թիւրքիա։ Այսօր գերմանական Թագաժառանգը հանդիսաւոր ընդունելութիւն կը տայ կոնգրէսին եկած պետութիւնների ներկայացուցիչներին։ Կայսրի հրամանով ընտրութիւնները գերմանական պարլամենտի համար կը լինեն յուլիսի 30-ին։ Վէրքերը նորից կապելուց յետոյ կայսրը նստած է բազկաթոռի մէջ։ Բիկոնսֆիլդ Բերլին հասնելով այցելեց Բիսմարկին, որի մօտ մնաց $1^1/_2$ ժամ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագրում տպված է հետևեալ բիւլետէնը Կայսրուհու առողջութեան մասին. «Առաւօտեան 8 ժամ։ Նորին Մեծութիւնը գիշերը հանգիստ անցկացրեց, թուլութիւնը քչացաւ, տենդային դրութիւնը աննշան է։ Տեղական երևոյթները լաւանում են։ Երէկ հասաւ Պետերբուրգ Եդինբուրգեան դքսուհին։»

Կ. ՊՕԼԻՍ, 31 մայիսի, (12 յունիսի)։ Ռուսաց գէներալ-շտաբի օֆիցէրները ընտրեցին Ադրիանոպոլից 10 կիլոմէտր հեռաւորութեամբ գտնվող մի կէտ, Կայսերական գվարդիայի բանակը կանգնեցնելու համար։ Բոլգարական էկզարխը ուղևորվում է դէպի Ֆիլիպոպոլ։ Բօղոսի սարերում կռիւ կար ռուսաց զօրքերի և ապստամբների մէջ։ Ռուսաց զօրքերի գիծը պահպանում է ճանապարհը Թաթար-Բազարջիկի և Սոֆիայի մէջ։

ԲԵՐԼԻՆ, 31 մայիսի (12 յունիսի)։ Բիկոնսֆիլդ ընդունեց այսօր կէսօրին Անդրաշի կոմսին և դրանից քիչ ուշ Շուվալովին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դեմ 1½ ր., ԹԻՆԱՑԻ ԻՒՂ 1¼ ր., ցեղատա մազնեզիայի 2 ր., ԲՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԷՍ և անգլիական օղի 1½ ր., ճանապարհի ամաններ գիւժինը 3 ր., թէյի գդալներ (չէն սեանում) 1½ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կապ 10 ր. և բարձր, տրիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազէի 1 ր. ալշինը, շղթաներ (Արիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.: Մի և նոյն խանութում շուտով կը սատացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի դեղ, և այլն:

6—20

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹԻ» խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել, որ ամսագրի նշանակած ժամանակին չը հրատարակվելը կախված էր մի քանի կարևոր և խիստ բացառութիւնից անկախ պատճառներից: Բայց խոստանում է առաջին համարը անպատճառ յունիսի 10-ին հանել, իսկ հետևեալները կանոնաւորապես իւրաքանչիւր ամսի 10-ին:

Խմբագրութիւնը խնդրում է բաժանորդագրվել ցանկացողներից շտապն ստորագրվելը որպէս զի կարելի լինի մոտաւորապէս որոշել տպագրվելիք օրինակների թիւը, որը թղթի թանգութեան պատճառով գործիս մէջ մեծ նշանակութիւնունի:

Աւելորդ չէ համարում յիշեցնել այն բաժանորդներին, որոնք լոկ նամակներով են ստորագրվել, որպէս զի բաժանորդագիրը ուղարկելու, որ վճարը կանխիկ է: Առանց բաժանորդագիրը ստանալու ամսագիրը ոչ ոքին չի ուղարկվի:

Խմբագիր Յակոբ Տէր-Յովհաննիսեան:

1878 մայիսի 5-ին.

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՀԱՏ Է ԵՎ ԷՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Только что возвратившись изъ заграницы привезъ съ собою большой выборъ разныхъ карманныхъ золотыхъ и серебрянныхъ ЧАСОВЪ ремонтуаровъ различныхъ системъ, какъ-то, репитирныхъ (Répétition à munites) съ келендарями (à quantième) докторскіе часы (Secondes indepèndantes) и т. д. Выборъ сдѣланъ мною у лучшихъ женевскихъ фабрикъ, изъ той самой партіи которая была отправлена на Парижскую всемирную выставку; за вѣрность хода часовъ магазинъ гарантируетъ.

Большой выборъ разныхъ золотыхъ, бриліантовыхъ и серебр. вещей очень изящная работа; не смотря на курсъ, цѣны умѣренныя.

Магазинъ С. КАЦЪ

Дворцовая улица № 3. (332) 5—4.

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Ռամբէկնայա փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ:

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտորայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում:

25—22 (2)

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է ընկերութեան անդամներին, որ ընկերութեան և վարչութեան նիստերը ամառվայ ամիսներին չեն լինելու, նորա յետաձգվում են մինչև Սեպտեմբերի 5: Ընկերութեան հետ գործ ունեցողները թող բարեհաճեն դիմել քարտուղար Ս. Ս. Շչուկինին (Լաբարատորնայա փողոց № 68) և գանձապետ Ա. Գ. Սերգէեվին (Փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ, Երևանեան հրապարակի վրա):

ԲԼԱՆՇԱՐԻ

մանկական վէպերից

շուտով լոյս կը տեսնեն՝

«Պարի-Հովիւը» թարգմանեց Կոստանդ Կրասիլնիկեան գինը 10 կոպէկ.

«Ուղտաչէ» թարգ. Դաւիթ Տէր Պետրոսեան գինը 10 կոպէկ.

Ստանալու հասցէն. Շուշի. Կոստանդ Կրասիլնիկեան:

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ, ծախվում են ի միջի այլոց հետևեալ հայերէն նոր գրքերը.

1. Փոքրիկ ժողովրդական Այբբենարան գիւղական ուսումնարանների համար, գինն է 5 կոպ. գումարավ առնողներին զիջումն կը լինի.

2. Գէորգ Բարխուդարեանի նոր թարգմանութիւնները՝ Դոն Կարլոս, Նաթան իմաստուն և Օրլէանի կոյս, իւրաքանչիւրը 60-ական կոպ.

3. Դոն-Քիշոտ Լամանչեցի թարգ. Յ. Առաքելեանի, գինն է 70 կոպ.

4. Լեոնի Վիշապ՝ Շահ-Ազիզեանի գինն է 1 ր. 25 կ. Ճանապարհի ծախսը գնողների վրա է.

ՄԻ ՕՐԻՈՐԻ ՎԱՐԺՈՒՀԻ,

որ մի քանի տարի դասատուութիւն է արել ազգային ուսումնարաններից մէկում, ամառային արձակուրդի ժամանակ ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ: Պատրաստում է նոյնպէս 8—9 տարեկան տղաների հետ: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատան:

ՊԱՏԱՀՄԱՄԲ ծախվում է կարմիր և կապույտ թուղթ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՆԻՑ ԷԺԱՆ: Պէտք է հարցնել թղթի պահեստի խանութում Վելեամինովսկայա և Նագովսկայա փողոցների անկիւնում (Խոսրովի տանը) «Кавказъ» լրագրի խմբագրատան կից: 4 (12)

ՅՈՒՆԻՍԻ 2. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունիսի 1-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուամպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիզրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիզրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առհարական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	—
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքրը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Աւիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը բնաճարպի (стеар.)	13	—
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բաժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» Լիվանի . . .	22	—
» մարտինկոյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՒԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հատարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիսչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ.

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան.

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակատ վենէրական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր:

Ուրբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բէյլս աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Յ. Ս. Ստացանք յօգուտ «Արարատեան» ընկերութեան ուսումնարանի 23 ր. 9 կ. Մեղ շատ ուրախացնում է, որ ձեզ պէս երիտասարդները համակրում են այդպիսի գործին. Ցանկալի կը լինէր, որ մեծերը հետևէին ձեր գեղեցիկ օրինակին:

—ՓԱՐԻԶ. Ն. Բ. Ստացանք նամակը: Շուտով կուղարկենք պատասխան ձեր հարցերին:

—ԹԻՖԼԻՍ. Ս. Տ. Նոր էք նկատում: «Այնտեղ և Այստեղ» վիպասանութիւնը դեռ փետրվարին տպված էր «Մշակի» մէջ. Միթէ հայերէն գրուածքը պէտք է թարգմանվի, որ դուք նոր բարեհաճէք կարդալ:

—ԲԵՐԼԻՆ. Ա. Ա. Ստացանք նամակը. անպատճառ կը տպենք:

Дозволено Цензурою 1 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ